ՀԱՄԼԵՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ. Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ., *Երևան, ՀՀ ԳԱԱ «Գիտություն» հրատ., 2015, 278 էջ:*

Վերջերս ընթերցողի սեղանին դրվեց բազմահմուտ պատմաբան, պ. գ. դ., պրոֆ. Համլետ Հարությունյանի «Նոր Բայազետի գավառը 1920–1930 թթ.» մենագրական աշխատության երրորդ գիրքը, որով հեղինակն ամբողջացրեց իր բազմամյա գիտական պրպտումների արգասիքը հանդիսացող Երևանի նահանգի ամենաընդարձակ գավառի՝ Նոր Բայազետի ավելի քան 100-ամյա պատմությունը: Հիշեցնենք, որ գավառի բազմաշերտ ու համալիր պատմությանը նվիրված հեղինակի 1-ին գիրքն ամփոփում էր Արևելյան Հայաստանի, այդ թվում՝ գավառի Ռուսաստանին միացման պահից (1828 թ.) մինչև Առաջին աշխարհամարտի նախօրեն (1913 թ.), 2-րդը՝ պատմաքաղաքական դեպքերով և իրադարձություններով շատ ավելի հագեցած 1914–1920 թթ. ժամանակաշրջանը: Գրախոսվող 3-րդ գրքում Նոր Բայազետի պատմության շարադրանքը հասցված է մինչև 1930 թ. կեսերը, երբ կուսակցական-պետական բարձրագույն մարմինների որոշմամբ, տեղերի հետ կապը ավելի ամրապնդելու և կառավարումն ավելի արդյունավետ դարձնելու նպատակով, գավառները վերացվեցին ու դրանց տրոհման միջոցով ստեղծվեցին շրջաններ, որոնք պահպանվեցին մինչև 1990-ական թվականների կեսերը:

Դժվար չէ նկատել, որ ժամանակագրական առումով երեք մասից բաղկացած սույն ուսումնասիրությունը օրգանական մի ամբողջություն է, որը լիակատար պատկերացում է տալիս Հայաստանի սոցիալ-տնտեսական, հողակլիմայական ծանր, սակայն յուրահատուկ լեռնային ու լճային պայմաններ ունեցող երկրամասի մասին:

Առաջին հայացքից թվում է, թե հետազոտության թեման ընդգրկում է Հայաստանի ընդամենը մեկ գավառ: Սակայն ծանոթանալով աշխատության բուն շարադրանքին՝ կարելի է տեսնել, որ գավառի վարչաժողովրդագրական պատկերը, սոցիալ-տնտեսական, հասարակական-քաղաքական ու հոգևոր մշակութային կյանքը ներկայացված են հայոց պատմության լայն խորապատկերի վրա: Այլ խոսքով՝ Նոր Բայազետի գավառը ներկայանում է որպես Հայաստանի պատմության մի մանրապատկեր:

Հ. Հարությունյանն իր առջև դրված խնդիրները վեր հանելիս հետազոտությունը տարել է ոչ թե էքստենսիվ, տարածական ու ծավալային, այլ ինտենսիվ՝ խորքային բացահայտումների ուղիով: Այստեղ մի կողմից հեղինակին օգնել են հսկայական, մեծամասամբ նորահայտ արխիվային հարուստ փաստաթղթեր և այլ վավերագիր նյութեր, էլ չենք խոսում հիմնահարցին վերաբերող տպագիր սկզբնաղբյուրների, վիճակագրական ժողովածուների, ժամանակի մամուլի և այլնի մասին, մյուս կողմից՝ հետազոտական, փաստական ու վիճակագրական տվյալները վերլուծելու, համադրելու ու ընդհանրացնելու նրա մեծ ունակությունները:

Ինչպես ասվեց, գրախոսվող գրքում Հ. Հարությունյանը հետազոտել է Խորհրդային Հայաստանի օրգանական մասը կազմող Նոր Բայազետի գավառի առաջին տասը տարիների պատմությունը՝ իր դրսևորումներով ու յուրահատկություններով: Չնայած խորհրդային վարչակարգին բնորոշ վարչահրամայական, միակուսակցական կառավարման համակարգին, այնուամենայնիվ, հեղինակը փաստական հարուստ նյութերի ու տվյալների հիման վրա արձանագրում է, որ Նոր Բայազետի գավառը, 1920-ական թվականներին, նախընթաց տասնամյակների համեմատ, ակնառու տեղաշարժեր ու աճ է ապրել կյանքի գրեթե բոլոր ոլորտներում՝ բնակչության ընդհանուր աճի, անգրագիտության վերացման, կրթամշակութային կյանքի զարգացման ուղղությամբ:

Գավառի տիպական օրինակով՝ Հ. Հարությունյանն անդրադառնում է ՆԷՊ-ի պայմաններում տնտեսության վերականգնման, ընտրական, հողաշինարարության, հողաբաշխման, հարկային համակարգին և այլն: Հասարակական-քաղաքական կյանքի լուսաբանման առումով ճանաչված պատմաբանի տեսադաշտից դուրս չի մնացել Փետրվարյան 1921 թ. ապստամբությունը,

որը, ինչպես հայտնի է, որոշակի արձագանք էր ստացել նաև գավառում: Մեկ ամբողջական գլուխ է նվիրված պատմագիտական գնահատականի առումով ոչ միանշանակ այդ իրադարձություններին: Գավառում ընթացող դեպքերը ներկայացված են հանրապետությունում ծավալվող իրադարձությունների ընդհանուր ֆոնի վրա: Ի պատիվ հեղինակի՝ տրված գնահատականները, մեր կարծիքով, փաստարկված են, հիմնավոր ու անառարկելի:

Քննարկվող աշխատության գիտական արժեքը մեծանում է նրանով, որ հեղինակը բավարարվել է ոչ թե ազգաբնակչության տեղաշարժերի, գյուղատնտեսության ու անասնագլխի աճի, դպրոցական-կրթական ու մշակութային շինարարության և այլ ոլորտներում սոսկ փաստեր արձանագրելով, այլ աղբյուրագիտական-վիճակագրական ցաքուցրիվ տվյալների համակարգման միջոցով, տքնաջան հաշվարկների հիման վրա կազմել է ընդհանուր թվով 14 աղյուսակ և կատարել դրանցից բխող վերլուծություններ ու ընդհանրացնող եզրահանգումներ: Գրքի վերջում բերված է նաև 4 ցուցակներից բաղկացած հավելված:

Այսպիսով, մեր կարծիքով, ընթերցողի դատին հանձնված Հ. Հարությունյանի սույն մենագրությունը Նոր Բայազետի կյանքը համակողմանի լուսաբանող հիմնարար, գիտական տեսակետից բարձրարժեք, մեթոդական առումով պատմագիտության արդի չափանիշներով շարադրված, կառուցվածքով կուռ և ամբողջական ուսումնասիրություն է, որն արժանի է ամենայն դրվատանքի: Սույն ձեռնարկը կարող է նաև լավ նախադեպ դառնալ Հայաստանի մյուս գավառների ու երկրամասերի նմանատիպ հետազոտման առումով, որը, անշուշտ, բացի պատմագիտականից, ունի նաև հայրենագիտական-ճանաչողական նշանակություն:

ԱՐԱՐԱՏ ՀԱԿՈԲՅԱՆ